

միանդամայն հոգալ պ. Թուրեանի ճամբռւ ծախքը, զինք էջմիածին զրկելու և տեղւոյդ ճոխ գրադարանին միջոցաւ իր երկասիրութիւնը ընդարձակելու և աւելի ճոխ ու վաւերական ընելու զայն։ Հաւանաբար այս տողերը տպուած պահուն պ. Թուրեան արդէն հասած կլինի էջմիածին և ձեռնարկած իր գործին։ Այս տողերով Ամերիկայի հայութեան յարգանքը և գնահատումը կը յայտնենք իր այդ արժանաւոր զաւակին կրթական մեծ յաջողութեան համար և կ'աւելացնենք թէ, մեր գաղութը գերազանցապէս պէտք ունի այդ ոգիով և մէթօդով իւր իսկ ծոցին մէջ պատրաստուած ուսանողներու ապագայ արդիւնալից եկեղեցական գործունէութեան։

Բ Օ Ս Օ Ն

Կ. 8. Գարկիւլեան.

Տ Ա Ճ Կ Ա Յ Ա Յ Յ Փ

Պոլսոյ թերթերում կարդում ենք.—

Ծնորհուած է նիքուարի ազգային դպրոցի վերաշնորթեան և մի յարկ աւելացնելու կայսերական բարեհաճ իրադէն։ Նէնքը պէտք է բաւականացնի 400 աշակերտի։

Մտացուած է Պելէճիկի նորընտիր առաջնորդական Փոխոնորդ Թաթուլ վարդապետ Դուբեանի հաստատութեան հրամանագիրը։

Երուսաղէմի վանուց նախորդ ելեմտից տեսուչ Տ. Ղեոնդ վարդապետ Մագսուտեանը իր գրպանի-տետրակ անուանած և օթէլներու շինութեանց հաշիւներու տեղեկադիրը Հաշուեքննիւ Մասնախումբը վաղուան նիստի մէջ պէտք է քննի ոոյն մատուցեալ շինուածոց մանրամասն հաշիւները և թեր ու դէմ-

պիտի բերէ նըուսաղէմէն յունիսի 8-ի թուով զրկուած ընդարձակ տեղեկագրի հետ, որի մէջ քոան երեք գլուխներով ամեն ինչ պարզուած և լուսաբանուած է, գոհացումն տալով վարշատիքան կողմանէ եղած ծանուցեալ ինսը հարցումներուն:

Նիկոմիդիոյ վիճակի Ալյովէի Միջադիւղի եկեղեցու կողոպատման պատճառաւ Նիկոմիդիոյ առաջնորդ Ստեփանոս արքեպիսկոպոս անձամբ քննութիւն կատարելով, գեւղացիներին հրաւիրել է եկեղեցի և բոլորին երգուեցրել Աւետարանի վրայ: Քանտարկուած երկու քահանաներից մինին ազատ արձակել է, իսկ տէր 0հան քահանան հարցաքննութեան է ենթարկուել:

Ոռւսնուգից խեղկատակ պօակագրութեան մի լուր են հաղորդում:—

Առաջնակարգ վաճառատան մի պաշտօնեայ Մելքոն Յ. Կարկանեան սիրահարում է ռումանացի Ելիզա անուն դեղեցիկ և հարուստ օրիորդի վրայ: Ելիզան պայման է դնում, որ օրինաւոր կերպով ամուսնանան, հակառակ դէպրում արձակման թուղթ է պահանջում: Մելքոն գիմում է տեղւոյն աւագեցէց Կարապետ քահանայի, վերցնում է նրա փակեղն ու փետնը, հագցնում է այն փառաւոր մօրուքով օժտուած Յակոբ անունով մի բանջարավաճառի և որպէս քահանայ կը տանի հարունեատուն: Պատկը կը կատարուի, ներկայ եղողները կը շնորհաւորեն նորապնակ զոյգը, բանջարավաճառ քահանան տալիս է իւր օրհնութիւնը: Սակայն տիկին Կարկանեան ըմբռնելով իրողութիւնը, գտառան կը գիմէ՝ մեղադրելով իւր ամսաւուն և նրա խորհրդակիցներին այդպիսի կեղծիքի մէջ: Տէր Կարապետ քահանան, Մելքոն և Ելիզա մօտերս պէտք է ներկայանան գտառան: Ելիզայի զայրոյթի շարժառիթն այն է՝ թէ ինչպէս եկեղեցական օրէնքները խաղալիք կը գառնան և ինքը կը համբուրէ բանջարավաճառի բիրտ ձեռքը:

Իգմիրից յուլիսի 11-ի թուով գրում են.—

Երէկ կիւրակէ կէս օրին յետոյ Գարաթաշի եկեղեցու մէջ? տեղի ունեցաւ նոյն արուարձանի վարժարանի տարեկան հանդէսը վայելուչ շքեղութեամբ: Տաճարն ամբողջովին լեցուած էր ծնողներու և կրթասէրներու երկուու ստուար բաղմու-

թեամբ։ Հանդէսը ակսուեց 4½-ին նախագահաւթեամբ տէր նղիշէ եպիսկոպոս Դուքեանի՝ իր շուրջն ունենալով Խաչերեան վարդապետին, տեղւոյն քահանային և ուսումնական խորհրդի անդամներին։ Եացման երգից յետոյ ակսուեց աշակերտների դասախոսութիւններն ու ոտանաւորների արտասանութիւնը, որոնք հաճելի տպաւորութիւն թողին և ջերմապէս ծափահաւուեցան։ Վարժուհու խօսած քանախոսութիւնից յետոյ նախագահ սրբազնի գեղեցիկ ըանախոսութիւնն ու «պահպանիցը» վերջակէտ եղան այս պարզ, սակայն սիրուն հանդիսին։ Ներկայ եղողները ջերմապէս շնորհաւորեցին հաստատութեան աշխատաւորները, ոյք այնքան աշխուժով և համակրանքով վարած են այս կրթական գործին։

Երուսաղէմի հաշուեքննիչ յանձնաժողովն այսօր գումարուեցաւ Պատրիարքարանի մէջ ատենապետութեամբ Խորքեան Գրիգոր Եֆո-ի, և հրաւիրելով տէր Աւոնդ վարդապետը, զանազան հարցումներ ըլլաւ և տուած քացատրութիւնները լսեց։ Աւոնդ վարդապետ ուղեց իմանալ, թէ իրք ամբաստանեամկը հրաւիրուի։ Պատասխանուեցաւ թէ յանձնաժողովը լոկ քընութեան համար է և ոչ ոքի չի ամբաստանում։

Երուսաղէմից պատրիարքը գրել է Պոլիս, որ վանքի հաշեւների քննութեան առթիւ եթէ լուսացանութեան կարօակէտեր գտնուին, հարկաւոր է լսել Աւոնդ վարդապետի քացատրութիւնները։ Եթէ պէտք լինին պատրաստ է նաև երկու վարդապետ զրկել Պոլիս իրենց գիտողութիւնները բերանացի հաղորդելու։

Տ. Աւոնդ վարդապետ երէկ իրիկուն Յանձնաժողովի նիստից յետոյ տեսակցութիւն ունեցաւ Պատրիարք հօր հետ։ Կը լսենք թէ այս տեսակցութեան մէջ ո. Պատրիարքը միանգամ ևս շեշտել է՝ թէ ինքը և կեղունական Վարչութիւնը ամեննեին չեն ուղում, որ ազգը նորից հրաւիրուի Երուսաղէմի վանքի պարտիքը գոցելու մամար հազարաւոր լիբաններ վճարելու։ Այս նկատումն ուրիշ ըոլոր նկատումներից գեր ի վերէ։ Ուստի Աւոնդ վարդապետից պիտի պահանջուի ճշտել, թէ որչափ է վանքի պարտիքը և պարզել, թէ ինչպէս է գոյացել այն և միջոց ցոյց տալ, թէ ինչպէս գոցել այդ պարտիքը առանց ազգի վրայ մի նոր բեռ դնելու։ Ապա թէ ոչ, ի. Պոլսոյ Պատրիարքարանը

ընտաւ միավագ չունի նրանունդէմի Պատրիարքարանի ներքին գործերին խառնուելու:

Գաւառների մէջ կատարուած նոր մարդահամարից երեացել է, որ նդեսիոյ մէջ բաւական թուով ազգայիններ արձաւնագրուած են օտարագաւանների առմարի մէջ, թէ և հայ եկեղեցին կը հայթայցթէ իրենց հոգեսր մատակարարութիւնը: Այսպիսինները եղած յորդոքներու վրայ նորից արձանագրուել են Հայ եկեղեցու առմարին մէջ:

Արեւելիում կարդում ենք. կըսուի թէ դպրեվանքին այս տարուան նորընծաներէն ու. Շաւարշ և ու. Շահէ արեգանեցը եւրոպա պիտի զրկուին իրենց աստուածաբանական հմտութիւնը կատարելագործելու համար աստուածաբանական համալսարանի մը մէջ:

Ոռւսճուգի հարուստ վաճառականներից պ. Սալգիո Գոյցումճեան, իր սեպհանական հողի վրայ, որ 300 սոկի արժէ, սկսել է շինել տալ օրիորդաց վարժարան, որի ցածի յարկը արդէն աւարտած է, ևսկ ամբողջութիւնը պատրաստ պէտք է լինի առաջիկայ ուսումնական տարուայ սկզբին: Նէնքի համար մօտ 500 սոկի պէտք է ծախսուի:

Հանգօւցեալ գօքտոր Խօրասանճեանը իւր կենդանութեան ժամանակ միավագ յայտնած էր գեղատան համար յատուկ շէնք շինել: Այժմո Խօրասանճեանի որդին ու ընտանիքը յատուկ դեղարանի շինութեան համար յատկացրել են հինգ հարիւր քսան և հինգ սոկի:

Մշոյ ոչ Կարտապետի վանքը, որուն վերանորոգութեան պէտքը բաւական տարինեցէ ի վեր Պատրիարքարանի ու շաղրութեան առարկայ եղած էր, այս անդամ գործնական ձև մը պիտի ստանայ և Պատրիարքարանը գաւառական եկեղեցիներու յատկացեալ դրամէն գումար մը յատկացնելով, պիտի նորոգել

տայ այդ վանքը՝ որուն միաբանութիւնը այս իմաստով շատ անդամ դիմումներ ըրած է արդէն պատրիարքարան։

Երուսաղէմէ կ'գրեն մեզ. — Տ. Յարութիւն Ա. Պատրիարքը՝ յուլիս 20 թուակիր հեռագրով հարկ համարած էր հրաժարեցնել Տ. Գէորգ Եպս. Երէցեանը Պօլսոյ Պատր. Փոխանորդութեան պաշտօնէն։ Յուլիս 23ին պաշտօնագիր մ'ուղղեց շեշտելով իր հրաժարեցուցման էական պատճառները, և միանգամայն յայտնելով թէ «մինչև ցարդ համբերեցի հայրական ներողամբ տութեամբ այն ամեն արարքներուդ դէմ, զորս թէ՝ նկատմամբ մեր անձին և թէ նկատմամբ միաբանական ուխտիս ի գործ գրեթ վերջին 3—4 տարիներու մէջ ծանօթ հաշուական խնդրոյն առթիւ»։ Այս պաշտօնագրով միանգամայն կ'զեկուցանէ Տ. Գէորգ Եպս. Երէցեանին՝ թէ «իբրև Պատրիարք Հայոց Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Աթոռոյն, կ'ծանուցանեմ, որ անմիջապէս փութաք մեր փոխանորդարանի բոլոր գործերը, Եկտի գուլելի, Եալովայի ագարակաց և այլ աթոռապատկան վագֆներու հաշիւներն ու գոյքերն անմիջապէս յանձնել Արժ. Տ. Արիոտակէս վարդապետ Խաչատրեանի»։ Եւ կ'վերջացնէ իր պաշտօնագիրը սա՛ բացայաց խօսքերով։

«Պէտք է գիտնաք, որ այս կերպով միայն կընայ հազիւմինչև աստիճան մը թեթևնալ ձեր պատասխանատւութիւնը»։ Հրաժարեցուցեալ Պատր. Փոխանորդին պաշտօնակութեան համար արդարութեան գործոց Բարձր. Նախարարին և Տ. Մաղաքիա Ա. Պատրիարքին ալ հեռագրաւ հազորդեց իրողութիւնը։ Ինչպէս որ այսօր ալ՝ ի Պատրիարքարան պաշտօնագիր մ'ուղղեց Տ. Յարութիւն Ա. Պատրիարքը, ներփակելով Տ. Գէորգ Եպիսկ. Երէցեանին հասցէին ուղղած յանդիմանագրին պատճէնը։

Այս ամբի ամենեին դանձանակի արդիւնք չէր նշանակուած Տ. Գէորգ Եպիսկ. Երէցեանի ամսատետրակիներուն մէջ, մինչդեռ փութկոտութիւն կ'ունենայ ծախուց մէջ նշանակելու համբարձման տօնին առթիւ Ազգ. Հիւանդանոցի տուած 2 օամ. ոսկւոյ նուէրը, հոգ չէ թէ Պօլսոյ լրագիրը, ի պաշտօնէ հռչակեցին զայն՝ Տ. Գէորգ Եպսկ. Երէցեանի իբր անձնական մի նուէրը։

Աղջ. Պատրիարքարանէ լուր կ'արտել մեզ՝ թէ երսւսաղէմի Պատր. Փոխանորդ Տ. Գէօրգ եպսկ. Երէցեան Երուսաղէմ Հրաշ-իրուած չէ, այլ ոլարդապէս պաշտօնանկ եղած է, և այս տնօրինութիւնն ի պաշտօնէ հաղորդուած է Երուսաղէմէն Դա-տական Նախարարութեան:

Տ. Գէրդ եպսկ. Երէցեան Երկու բողոքադիրներ զրկած է, մին Երուսաղէմի Ա. Պատրիարքին՝ իբրև Նախադահի միտրանա-կան ժողովոյ, և միւսը՝ Ա. Պատրիարք Հօր՝ իբրև Նախադահի Աղջ. Աեղդ. Ա.արշութեան, բացատրութիւն պահանջելով այն հարկեցուցիչ պատճառներուն համար, որոնց վրայ հիմնուած է իր պաշտօնէն դադարման տնօրինութիւնը:

Երուսաղէմի Ա. Պատրիարքն հեռագրաւ ծանուցած է Ա. Պատրիարք Հօր, թէ Ժառանգաւորաց վարժարանի տեսուչ կար-դուած է Տ. Դանիէլ Ծ. վարդ. Յակովեան, ինչպէս Երէկ զրե-ցինք, Ժառանգաւորաց վարժարանի Տեսուչ Տ. Եղիշէ Ծ. վարդ. Զիլինկիրեան Երուսաղէմի Պօլսոյ Պատր. Փոխանորդի պաշտօնին կոչուած է:

Վ Ա Ն Ա Յ Հ Ո Ւ Բ Ե Բ

Տեղոյս Նախահաստատ Կեդրոնականը վերջերո յաջողեցաւ արհեստանոց մըն ալ կցել իր կրթական գործին, ուր նոյն գպրոցի աշակերտները ուսման հետ պիտի սորվին նաև ար-հեստը, որ առ այժմ կը բաղկանայ միայն կերպառագործութենէ եւրոպական թելերով: Այս արհեստանոցին համար յատկացուած է նոյն գպրոցի վարե յարկը, ընդ վալութեամբ և վերին հակողութեամբ մասնագէտ Աւետիս Էֆ. Կաթողիկոսեանի, որ մեր արհեստաւորաց մէջ ընածին տաղանդ մըն է իր հնարագի-տական ընդունակութեամբ, այնպէս որ՝ նոյնիսկ պարսկական ցփսի գործելու ալ ձեռնարկած ըլլալով, վերջերո անոր համե-մատ Եւրոպական գործիք մըն ալ բերել տուաւ, ինչպէս որ ամե-նայն ճարտարաբութեամբ և յաջողութեամբ կընայ գործել ամենէն կնճռոտ կերպառներ լրենց նազներով, և այս ամենը ըոլորո-վին ինքնազարդացման ուժով ձեռք բերած ըլլալով՝ առանց վարպետի օգնութեան: Այս արհեստանոցին համար առայժմ